Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՑ-2 պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան - 2 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.-31.03.2024թթ. |
| Ներկայացման օր | 01.04.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.04.10
15:11:19 AMT

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 51 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 2 դեպքի վարում (աչքի վիրահատության կազմակերպում՝ պետական պատվերի շրջանակում, «ընտանեկան նպաստ» համակարգում վերահաշվառման կազմակերպում), 9 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, նեյրոբիկ վարժությունների, դեբրիֆինգի մեթոդի կիրառման, ինտելեկտուալ վարժությունների կապերի ընդլայնման, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 10 խմբակ՝
    - Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ,
    - Կինեզոլոգիա,
    - Հմուտ ձեռքեր,
    - Երգ,
    - Հիշողության մարզում,
    - Խոհարարական,
    - Տիկնիկագործություն,
    - Առողջապահական,
    - Գրական,
    - Քննարկումների ակումբ,

  Խմբակներին մասնակցել է 51 շահառու:
  Կազմակերպվել է թվով 34 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 46 շահառու: Իրականացված միջոցառումներն են.
  - Պ.Սեւակի «100 ժողովածու» գրքի շնորհանդես, Ավ.Իսահակյանի տուն-թանգարան,
  - «Եղիցի լույս»՝ նվիրված Պ.Սեւակի 100-ամյակին,
  - Ներկայացման դիտում՝ «Երբ գարուն է գալիս»,
  - Ցուցահանդես-միջոցառում՝ «Հմուտ ձեռքեր» խմբակի անդամների նախաձեռնությամբ,

- Տեառնընդառաջ,
- Կանանց միջազգային օր,
- Ծննդյան օրվա նշում,
- Ներկայացման դիտում՝ Գ.Սունդուկյանի անվան թատրոն, «Հարսնացուն հյուսիսից» /2 անգամ/,
- Ներկայացման դիտում, Հ.Ղափլանյանի անվան թատրոն, «Գանգսթեր Մաքը» /2 անգամ/,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, «Սուրբ Ծննդյան տոներ» համերգ,
- Ա.Բաբաջանյան համերգասրահ, Ջիվանու անվան աշուղական դպրոցի սաների համերգ՝ «Գուսանական երգեր»,
- Նարեկացի կենտրոն, նկարների ցուցահանդես՝ «Կարապետ Հաջի Ասլանյան»,
- Ցուցահանդես «Լույս և ստվեր»՝ Բրյուսովի անվան համալսարանի եւ Գյումրու արվեստի ակադեմիայի ուսանողների կոմիքսների նախագիծ,
- Նարեկացի կենտրոն, Թովմաս Պողոսյանի 70-ամյակին նվիրված ֆիլմի դիտում,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Գուստավ Մալեր սիմֆոնիա թիվ 1 ռե մաժոր «Տիտան»,
- Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, Ջ.Վերդի «Տրավիատա»,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ,
- Ա. Բաբաջանյան համերգասրահ, վերադարձ արմատներին «Գուսան» անսամբլի համերգ,
- Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, Ուիթնի Հյուստոնի երգերին նվիրված համերգ,
- Նարեկացի կենտրոն, «Ասմունքի երեկո», ֆրանսիական քոլեջի երեխաների ելույթը հայ բանաստեղծների բանաստեղծություններից,
- Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն, «Թ. Ալթունյան» պետական անսամբլի 86-րդ համերգաշրջանի բացում, Թ.Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլի համերգ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ «Հայաստանի պետական կամերային նվագախումբ և երգչախումբ» համերգ, Ֆրից Կրեմեր «Յոհան Սեբաստիան Բախ»,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, «Բարեկամություն պետական անսամբլ»-ի համերգ,
- Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային թատրոն, Ժ.Բիզե «Կարմեն»,
- Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, «Հայաստանի պետական կամերային նվագախումբ»,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական անսամբլի համերգ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, «Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոն»-ի բացումը,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, միջոցառում նվիրված ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, «Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոն»-ի համերգ,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, համերգ նվիրված «Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան»,
- Արամ Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի «Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոն»-ի փակումը,
- Արամ Խաչատրյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի ֆիլհարմոնիկ դահլիճ, Վ.Խանամիրյանի անվան պարային համույթի համերգ:

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 24 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 40) ուղղված հույզերի բացահայտմանը գույների միջոցով, շարժումների կոորդինացիային, տեսատարածական ընկալմանը, մանր շարժողականությանն ու ուշադրության կենտրոնացմանը: Մասնակիցները զբաղվել են կավաթերապիայով, մանդալաթերապիայով,
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

- Թվով 2 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.
- Եղիցի լույս» նվիրված Պ.Սևակի 100-ամյակին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1113084286727379),
- Միջոցառում նվիրված Տեառնընդառաջի տոնին, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1457043001888933),
- Կանանց միջազգային օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/photo?fbid=823550319808805&set=pcb.823550496475454),
- Խոհարարական խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1166077364804365),
- Կինեզոլոգիա (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/1836069733492811),
- Երգ (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/1513590936041337),
- Հոգեբանի անկյուն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/photo/?fbid=391910760203702&set=pcb.391911036870341):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.
- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային

խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/51 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 44 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 1 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 1 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 50 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 50 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 50 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 50 |
| 5.1 | Հայ եկեղեցու պատմություն, կերպարվեստ | 17 |
| 5.2 | Կինեզոլոգիա - 2 | 40 |
| 5.3 | Հմուտ ձեռքեր - 2 | 31 |
| 5.4 | Երգ | 18 |
| 5.5 | Հիշողության մարզում | 12 |
| 5.6 | Խոհարարական | 12 |
| 5.7 | Տիկնիկագործություն | 12 |
| 5.8 | Առողջապահական | 28 |
| 5.9 | Գրական | 14 |
| 5.10 | Քննարկումների ակումբ | 9 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 51 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 29 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)<br>Անհատական հոգեբանական խորհրդատվություն | 21 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «01» 04.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)